ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/101

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2024 թ. N 101

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Գյումրու պետական բժշկական քոլեջ**» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրազի 3
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. փետրվարի 15-ին քննարկեց «**Գյումրու պետական բժշկական քոլեջ**» **ՊՈԱԿ-ի** (այսուհետ՝ ԳՊԲՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	13 հունվարի 2023 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	06 հունիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	25-28 սեպտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	01 դեկտեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	25 դեկտեմբերի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԳՊԲՔ-ում իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին, համահունչ են քոլեջի սահմանած առաքելությանն ու պետական կրթական չափորոշիչներին և ՈԱԾ-ին: ՄԿԾ-ներն իրականացվում են մոդուլային սկզբունքով, սակայն վերջնարդյունքների ձևակերպումը միշտ չէ, որ չափելի է: Քոլեջը մշակել է «Մեթոդական ուղեցույց», ուր տարանջատված են դասավանդման և գնահատման մեթոդները, ներկայացված են դրանց միասնական կիրառման մոտեցումները: Դասախոսները կիրառում են դասավանդման արդյունավետ և ուսանողակենտրոն մեթոդներ՝ միտված թիմային, խնդրակենտրոն, արդյունքահենք ուսուցմանը: Քոլեջը մեծ տեղ է հատկացնում նաև գործնական կարողությունների ձևավորմանը: Գործնական դասընթացների մեծ մասը, որոշ դասախոսություններ ու բոլոր պրակտիկաներն իրականացվում են գործատուների բազաներում:

Քոլեջը կրթական գործընթացների իրականացման համար ունի անհրաժեշտ մասնագիտական որակավորումներ ունեցող դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ: Գործում է ՊԴ կազմի ընտրության քաղաքականություն: Հաճախ քոլեջում դասավանդելու նոր մասնագետներին երաշխավորում են հենց գործատուները: Դասախոսների որակավորումները համապատասխանում են իրենց կողմից դասավանդվող դասընթացներին: Դասախոսների զգալի մասը բժիշկ-դասախոսներ են: Ձևավորվել է քոլեջ-գործատու մասնակցային կրթական միջավայր, դասախոսների միջև փորձի փոխանակման և լավ փորձի տարածման հարթակ: Քոլեջը որդեգրել է ՊԴ կազմի աստիճանական երիտասարդացման քաղաքականություն, գործում են սկսնակ դասախոսներին կրթական գործընթացներին ներգրավելու մեխանիզմներ:

ԳՊԲՔ-ի շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, առկա է սեյսմազինվածության մակարդակի բարձրացման և անհապաղ շինարարական աշխատանքների իրականացման խնդիր: Քոլեջի կաբինետ-լաբորատորիաները հագեցած չեն ժամանակակից գույքով, սարքավորումներով և

արդի բժշկական պարագաներով: Քոլեջը տարածաշրջանի գործընկեր բժշկական կազմակերպությունների հետ իրականացնում է ռեսուրսային բազայի համատեղ կիրառման քաղաքականություն, որի արդյունքում ՄԿԾ-ների գործնական պարապմունքներն իրականացվում են գործատուների արդի և հագեցած լաբորատոր բազաներում:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

ԳՊԲՔ-ի առաքելությունն արտահայտում է քոլեջի հիմնական նպատակները, ունի հստակ ձևակերպում, միտված է աշխատաշուկայի պահանջարկի բավարարմանն ու բնակչությանը բարձրորակ առաջնային բուժօգնություն ապահովող շրջանավարտների պատրաստմանը:

ՌԾ-ով սահմանված նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՌԾ-ով սահմանված գործողությունները ներառված են ստորաբաժանումների աշխատանքային պլաններում, որոնց արդյունքները որոշակիորեն ամփոփված են համապատասխան տարեկան հաշվետվություններում: Հաշվետվություններով դուրս բերված բարելավման ենթակա ոչ բոլոր խնդիրներն են ներդրված հաջորդ տարվա աշխատանքային պլաններում, սահմանված չեն արդյունքների գնահատման ցուցիչները:

Կարճ ժամկետում քոլեջը մշակել և գործողության մեջ է դրել կառավարչական գործընթացների կանոնակարգման փաստաթղթային հենքը, պաշտոնների անձնագրերով և աշխատակարգերով հստակ տարանջատված են հաստիքային գործառույթները, հստակ է խորհուրդների, ստորաբաժանումների աշխատանքային պարտավորությունների շրջանակը, ինչը նպաստել է կառավարչական գործընթացների արդյունավետությանը:

2022թ.-ից քոլեջում մեկնարկել են գնահատումների, որոշ դեպքերում էլ՝ բարելավումների շրջափուլերը, ձեռնամուխ լինելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջականացման գործընթացի իրականացմանը:

Քոլեջն իրականացրել է ծախսարդյունավետության գնահատում և քայլեր է ձեռնարկում ֆինանսական ռեսուրսների ավելացման ուղղությանբ:

ԳՊԲՔ-ում որակի ապահովման գործընթացները մեկնարկել են 2018թ.-ից, գործել է որակի ապահովման աշխատանքային խումբ, ուր ներգրավված են եղել դասախոսներ, վարչական աշխատողներ, ուսանողներ: 2020թ. սեպտեմբերից նշանակվել է կրթության որակի պատասխանատու:

Քոլեջում ՈԱ համակարգը դեռևս ձևավորման փուլում է, ՈԱ մշակույթի տարածման մեխանիզմներն արդյունավետորեն չեն գործարկվում, ներքին շահակիցները դեռևս լիարժեքորեն չեն ընկալում իրենց դերակատարությունը որակի ապահովման գործընթացներում: Իրականացված հարցումները չունեն որակական վերլուծություններով ամփոփումներ: Միևնույն ժամանակ քոլեջում առկա է այս բացի պատշաճ ընկալում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջում գործում են ուսանողների ընդունելության, ընտրության և հավաքագրման հստակ մեխանիզմներ: 2023-2024 ուստարում դիմորդների թիվն ավելացել է գրեթե բոլոր մասնագիտություններով՝ 2021-2022 ուստարվա համեմատ՝ շուրջ 6,5 %-ով:

Առկա են ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն և մեխանիզմներ: Գործող ՈՒսանողական խորհուրդն ունի որոշակի մասնակցություն կարիքների վերհանման գործընթացում: Կազմակերպվում են լրացուցիչ և խորհրդատվական պարապմունքներ, ուսանողներին տրամադրվում են մասնագիտական հմտություններն ու ստեղծագործ մտածելակերպը զարգացնող հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ: Քոլեջը կազմել է գնահատման սանդղակ, որը հնարավորություն է տալիս կիրառել նաև ուսանողների ինքնագնահատում: Ուսանողները բոլոր դասընթացների համար կազմում են սեփական աշխատանքային փաթեթներ/պորտֆոլիոներ, որտեղ ներառված են ուսումնառության նյութերն ու ուսանողների կատարած գործնական առաջադրանքները: Գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հետազոտական աշխատանքների ռազմավարություն մշակված չէ: Քոլեջը մշակել է «Հետազոտական գործունեության/ուսումնասիրության/ և ուսումնական գործունեության փոխկապակցման քաղաքականություն և ընթացակարգ», որը շեշտադրում է ուսանողի ներգրավումը հետազոտական, ուսումնական, մեթոդական և կազմակերպական բնույթի աշխատանքներում: Գործատուների բազաներում և լաբորատորիաներում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրել և վերլուծել իրական դեպքեր, գործատու-դասախոսների հետ իրականացվում են համատեղ դասեր, որի արդյունքում ձևավորվում են կիրառական և հետազոտական հմտություններ:

Քոլեջում դասավանդում են գիտական աստիճան ունեցող 5 դասախոս, որոնք թվով 19 գիտական հրապարակումներ ունեն:

Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգով սահմանվում են հաշվետվողականության ապահովման նպատակը, ձևերը, առանձնացված են քոլեջի ներքին և արտաքին շահակիցները: Հաշվետվությունները պարունակում են հիմնականում քանակական վերլուծություններ, որակական վերլուծություններն ամփոփված չեն և ընդգծված չեն բարելավման ենթակա խնդիրները: Հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ մասամբ առկա են ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի միջոցով, կայքէջը վերազինման փուլում է: Իրականացվում են ծնողական ժողովներ, գործատուների հետ հանդիպում-քննարկումներ: Առկա է ուսանողների կողմից կամավորական աշխատանքների որոշակի փորձ:

2023թ. քոլեջը մշակել է Արտաքին կապերի և միջազգային համագործակցության քաղաքականություն: Քոլեջի կողմից կնքված տարբեր պայմանագրերը, համաձայնագրերը հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների հետ նպատակ ունեն համագործակցություն հաստատելու ուսանողների, վարչատնտեսական կազմի և դասախոսների համար: Տարածաշրջանի առաջատար բուժհաստատությունների և կազմակերպությունների հետ քոլեջը ձևավորել է կայուն համագործակցային միջավայր՝ գործնական պարապմունքներն ու պրակտիկաները նրանց բազաներում կազմակերպելու նպատակով: Վերջին 2 տարվա ընթացքում բոլոր մասնագիտությունների գծով ավելացել է բազաների թվաքանակը:

Ֆինանսական հնարավորությունների ընդլայնման նպատակով քոլեջը դիմել և շահել է Էրազմուս+ ծրագիրը:

Քոլեջի առաջարկությամբ դասախոսները մասնակցում են «Գյումրու Ամերիկյան անկյուն» մշակութային և տեղեկատվական կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվող անվճար անգլերեն դասընթացների՝ դասախոսների անգլերեն լեզվի իմացությունը բարելավելու նպատակով:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գյումրու պետական բժշկական քոլեջ»ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցերի, ՌԾ-ի կատարողականների ներդրմանը,
   - գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական ու քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - գնահատում-բարելավում շրջափուլի գործիքակազմի բարելավմանը,
   - կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, մշտադիտարկման մեխանիզմների ներդրմանը, նմանատիպ ՄԿԾ-ների համեմատական վերլուծությունների իրականացմանը,
   - դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումների իրականացմանը և դրանց պարբերականության ապահովմանը,
   - դասախոսների և ուսանողների անգլերենի և այլ օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը,
   - հետազոտական ուղղությունների հստակեցմանն ու երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններում տեղայնացմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2024 թ. մարտի 26

ք.Երևան